

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Վեդի համայնք

03-ը մարտի 2023թ.

«ՎԵՂՈՒ ԹԻՎ 3 ՆԱԽԱՊԱՐՈՑԱԿԱՆ ՈԼՍՈԼՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վեդի համայնքի «Վեդուլ թիվ 3 նախադպրոցական ոլսոլմնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ կազմակերպություն) տնօրենի (այսուհետ՝ Տնօրեն) թափուր պաշտոնը զբաղեցնելու համար 2023 թվականի ապրիլի 4-ին ժամը 11:00-ին, Վեդուլ համայնքապետարանի շենքում /ք.Վեդի Թումանյան 6/ կանցկացվի մրցույթ «Վեդուլ թիվ 3 նախադպրոցական ոլսոլմնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնի համար:

Մրցույթին մասնակցելու իրավունք ունենան՝

Մրցույթին մասնակցելու իրավունք ունենալով պաշտոնը զբաղեցնելու համար ներկայացվող պահանջները բավարարող Հայաստանի Հանրապետության այն գործունակ չափահաս քաղաքացիները, ովքեր ունենան՝

1) բարձրագույն կրթություն:

2) կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով վերապատրաստված և նախադպրոցական ոլսոլմնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր):

3) «Նախադպրոցական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածով սահմանված չափանիշները բավարարող անձը:

4) իրենց պարտականություններին կատարման համար անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն (Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, համապատասխան ոլորտի Հայաստանի Հանրապետության օրենսդրություն և այլ իրավական ակտեր):

2. Տնօրենի ընտրության լրացուցիչ պայմաններն են՝

1) տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն:

2) ֆինանսատնտեսական գործունեություն իրականացման կարողություն:

3) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

4) աշխատանքի կազմակերպման և ղեկավարման անհրաժեշտ հմտություններ:

5) ենթակաների հետ վարվելու անհրաժեշտ էթիկայի կանոններին իմացություն:

6) առնվազն մեկ օտար լեզվի իմացություն:

Մրցույթին մասնակցելու իրավունք չունենալու անձը, ով՝

1) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ:

2) տառապում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 15-ի թիվ 98-Ն

որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդությունները հանդիսանում են մեկով:

3) օրենքի խախտմամբ չհանցել ժամկետային պարտադիր զինվորական ծառայություն:

4) դատապարտվել է հանցագործություն կատարման համար, և նրա դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված է:

5) զրկվել է որոշակի գործունեությամբ զբաղվելու հրավորությունից, կամ որին օրենքի համաձայն արգելվել է որոշակի պաշտոններ զբաղեցնել:

6) ներկայացրել է փաստաթղթեր, որոնք կեղծ են, լրիվ չեն կամ թերի են:

7) 65 տարին լրացած քաղաքացիները:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար դիմող քաղաքացիները Վեդուլ համայնքապետարանի աշխատակազմ պետք է ներկայացնեն՝

• դիմում:

• նախադարձ ցանկում նշված հաստատության ղեկավարման հրավորություն (հավաստագիր),

• մեկ լուսանկար՝ 3x4 չափսի:

• քաղվածք աշխատանքային գրքույկից կամ տեղեկանք աշխատանքային գործունեության մասին:

• ինքնակենսագրություն:

• անձնագրի, բարձրագույն կրթության դիպլոմի (արական սեռի անձինք՝ նաև գինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր գորակոչային տեղամասին կցագրման վկայականի) պատճենները:

• տեղեկանք՝ մշտական բնակություն վայրից:

• հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայություն դեպքում):

Դիմողները մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ներկայացնում են անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը 9:00-18:00-ն, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից: Դիմումները ընդունման վերջին ժամկետն է՝ 2023 մարտի 24-ը մինչև ժամը 17:00-ն:

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները տեղեկություններ և հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել Վեդուլ համայնքապետարանի աշխատակազմ /ք.Վեդի, Թումանյան 6, հեռ. /060/88-11-11/: